



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 42

<<01>> <<03>> 2018թ.

ք. Արտաշատ

ՔՐԻՍՏԻՆԵ ԼՅՈՎԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ  
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված << Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության>> կարգի 34-րդ կետով, հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրովի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2018 թվականի փետրվարի 26-ի որոշումը.

2018 թվականի մարտի 2-ից Քրիստինե Լյովայի Հարությունյանին նշանակել <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրովի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և կնքել աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ